



ԳԱՌՆԻԿ ՍՐԿ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

### Ք Ա Ր Ո Ջ

«Յանուն Հօր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ, ամէն»:

«Զի ամենեքեան որ սուր առնուցում՝ սըրով անկանիցին» (Մտթ. ԻԶ 52):

«Որովհետև ուլքեր սուր են վերցնում, սրով կընկնեն»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, սույն բնաբանը վերջված է Մատթեոսի ավետարանից: Այս աստվածային ճշմարտությունը ասել է մեր Տեր Հիսուս Քրիստոսը մեզանից շուրջ երկու հազար տարիներ առաջ իր մատնության և ձերբակալության ժամանակ, երբ իր աշակերտներից մեկը, ցանկանալով պաշտպանել իր վարդապետին, սրով կտրում է Հիսուսին ձերբակալողներից մեկի ականջը:

Մահաբեր գեներ՝ սուր, հրացան, թընդանոթ և վերջապես ատոմային բոմբ, ահա սրանք այն միջոցներն են, որոնցով մարդն իր արարումից ի վեր ջանացել է և այժմ էլ ջանում է հաղթության հասնել իր նմանի նկատմամբ և դրանով իսկ ստորկացնել և հպատակեցնել նրան: Հաղթանակը փառամոլ մարդկանց նպատակն է, իսկ պարտությունը համարվում է մեծագույն անպատվություն: Բանաստեղծները գովերգում են հաղթանակը, իսկ պարտության վրա ողբերգություններ հյուսում: Սակայն, սիրելի ժողովուրդ, եկեք տեսնենք, թե ի՞նչ է իրենից ներկայացնում հաղթանակը և ի՞նչ՝ պարտությունը: Հաղթանակ կարելի է համարել պաշտպանվող կողմի

հակահարձակումը և ներխուժողին ջարդելը. այսպիսի օրինակներ պատմությունից շատ կարող ենք բերել, օրինակ՝ Սարդարապատի ճակատամարտը, որտեղ հայերը, պաշտպանելով իրենց հայրենիքը, ջախջախեցին թուրքերին և նրանց դուրս շարտեցին: Հիշենք նաև վերջին՝ երկրորդ համաշխարհային պատերազմը, որի ժամանակ սովետական ժողովուրդն իր ոգու արիությամբ կարողացավ ծնկի բերել ֆաշիզմին: Ահա թե որն է հաղթանակն իր բուն իմաստով, որի ժամանակ հաղթողը ոչ թե փառամոլ է, այլ իսկական հերոս, որը կարողացավ իր արյան գնով ազատել իր հայրենիքը թշնամիներից: Իսկ «հաղթողը», որը ստրկացրել է որևէ ժողովրդի և տիրել նրա հողը, դա իսկության մեջ հենց ինքը պարտվողն է: Հոռու՞ր գրավեց Աթենքը և կարծեց, թե պարտության է մատնել նրան: Բայց տարիներ հետո Աթենքը իր իմացական բարձրությամբ հաղթեց Հոռմին և ստիպեց, որ նա ընդօրինակի իր ստեղծագործությունները: Աթենքը մշակութային հաղթանակ տարավ: Պարտված Հունաստանը հաղթանակեց: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչելությունը նույնպես շատերի կողմից ընդունվեց որպես Նրա կատարյալ պարտություն, նույնիսկ իր աշակերտներից ոմանք էլ այդպես մտածեցին և խաչելությունից հետո կրկին վերադարձան իրենց նախկին գործին՝ ձկնորսության: Առաքյալները, սրբերը, մարտիրոսները իրենց նահատակության ժամա-

նակ նկատվում էին պարտվողներ, իսկ նրանց հալածողները՝ հաղթողներ: Սակայն պատմությունը ցույց տվեց, որ այդ «պարտվածները» դարձան հաղթողներ, իսկ «հաղթողների» հիշատակն անգամ ջնջվեց: «հաղթողների» հիշատակն անգամ ջնջվեց:

Միրելի հավատացյալ ժողովուրդ, ինչպես տեսանք, անարդարները, որոնք իրենց փառամոլությունից էլնելով ցանկանում են տիրել ուրիշներին, դատապարտված են կործանման և, ինչպես սաղմուսացն է ասում՝ «Սուր հանին մեղաորք և լարեցին զաղեղունս իրեանց՝ հարկանել լարեցին զաղեղունս և զտանակն, սպանանել զայն որ խոնարհն է սրտի: Սուրք անցա մրտցեն ի սիրտս անցա և աղեղունք անցա փշրեցին» (Մով. 1, 2 15): Եվ սա պատահական չէ, որովհետև ոչ մեկը իրավունք չունի սուր բարձրացնելու և սպանելու իր նմանին, քանի որ Աստված պատվիրեց. «Մի սպանիր» և դարձյալ թե՛ «Ես սպանանեմ և ես կեցուցանեմ», այսինքն մարդը չէ, որ կյանք է տվել մարդուն, որպեսզի իրեն իրավունք վերապահի այդ կյանքը խելու նրանից, այլ՝ Աստված: Եվ եթե մարդն իր իրավունքները հավասարեցնում է Աստուծո իրավունքներին, ապա նա անդարձ կորած է և դատապարտված ոչընչացման: Նույնիսկ անձնասպանությունը համարվում է մեծագույն մեղք:

Միրելի բարեպաշտ ժողովուրդ, ներկա ժամանակաշրջանում անհատապաշտությունը այնքան զորեղացել է, որ խավարի ուժերը ձգտում են դեպի հաղթանակ, այսինքն իրենց սրերն են կտում-կոփում և

նախապատրաստվում պատերազմի, որը, ըստ նրանց, իրենց վերջնական հաղթանակ կապահովի: Այդ պատճառով է, որ աշխարհն այսօր տառապում է սպառազինությունների մրցավազքի մոլորցքով, և բոլորը միտումնավոր կերպով խլացրել են իրենց ականջները, որպեսզի չլսեն Հիսուս Քրիստոսի պատգամը՝ «Միրեցեք զմիմեանս»: Միրել միմյանց, ահա այն միակ դեղամիջոցը, որը կարող է այս հիվանդ աշխարհին առողջացնել և կյանք պարգևել, իսկ հակառակ դեպքում այդ հիվանդները չարաչար պիտի զոջան և ողբան, որովհետև պիտի կատարվի Քրիստոսի խոսքը. «Զի ամենեքեան որ սուր առնուցուն՝ սրով անկանիցին»:

Միրելի բարեպաշտ ժողովուրդ, Հայ Եկեղեցին, իր գլուխ ունենալով Վազգեն Ա Հայրապետին, իր մասնակցությունն է ունենում միջազգային խաղաղասիրական ժողովներին և աշխարհի մյուս բոլոր Եկեղեցիների հետ միասին աղոթում, որպեսզի Աստված խաղաղություն պարգևի աշխարհին և այն հեռու պահի չարիքից ու կործանումից: Արդ, սիրելի ժողովուրդ, եկեք մենք նույնպես աղոթենք առ Աստված աշխարհի խաղաղության համար և հուսանք, որ կիրականանա Եսայի մարգարեի սպասումը. «Եւ ձուկեցեն զուսերս իրեանց ի խոփս, եւ զսոփնս իրեանց ի մանգաղս. ոչ առնուցու ազգ յազգի վերայ սուր, եւ ոչ ես ուսանիցին տալ պատերազմ» (Ես. Բ 4). «Այժմ և միշտ և յսիտեանս յսիտենից, ամեն»:

